ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 118

30 10 2014թ.

ք. Արտաշատ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ 1987-1996 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.24 կետերով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «2014 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» թիվ 1112-Ն որոշման 7-րդ կետի պահանջների՝

1. Հաստատել Արարատի մարզի /ըստ տարածաշրջանների/ տեղական զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

2. Զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով առաջարկել ոստիկանության Արարատի մարզային վարչությանը.

1/ Կազմակերպել զորակոչից խուսափողների որոնում և ապահովել նրանց ներկայությունը զորակոչային տեղամասեր:

2/ Ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տարածքային տեղամասերում:

3/ Տրամադրել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր՝ զորակոչիկներին հանրապետական հավաքակայան փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար:

3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ:

4. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել զորակոչիկների բժշկական հետազոտությունների անցկացումն ու զորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների սահմանված կարգով իրականացումը զինկոմիսարիատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

5. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինկոմիսարիատներից՝ հանրապետական հավաքակայան:

6. Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածքային զինվորական կոմիսարներին՝

1/ Ձմեռային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ համաձայն պլան – գրաֆիկի:

2/ Ամենօրյա տեղեկատվություններ ներկայացնել մարզպետարան՝ զորակոչի ընթացքի մասին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզպետի

2014թ հոկտեմբերի 30 թիվ 118 որոշման

ԿԱԶՄ

Արտաշատի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Ա. Մուրադյան - Արտաշատի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Ս. Ատոմյան - ՀՀ Ոստիկանության Արտաշատի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ

Ա. Ներսիսյան - Արտաշատի քաղաքապետի տեղակալ

Ա. Ղազարյան - ավագ բժիշկ, թերապևտ

Գ. Գրիգորյան - վիրաբույժ

Ս. Թադևոսյան - սրտաբան

Հ. Ավետիսյան - քիթ, կոկորդ, ականջաբան

Լ. Հախնազարյան - ակնաբույժ

Ն. Մինասյան - հոգեբույժ

Մ. Մնացականյան - նյարդաբան

Ռ. Սաֆարյան - մաշկավեներաբան

Լ. Ավետիսյան - բուժքույր

Ի. Կարապետյան - հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի

2014թ հոկտեմբերի 30 թիվ 118 որոշման

ԿԱԶՄ

Արարատի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Գ. Ավոյան – Արարատի զինվորական կոմիսարի պարտականությունների ժամանակավոր կատարող, հանձնաժողովի նախագահ

Վ. Աղալարյան – ՀՀ Ոստիկանության Արարատի բաժնի պետի տեղակալ

Ա. Սարոյան – Վեդու քաղաքապետի տեղակալ

Ա. Մկրտչյան – ավագ բժիշկ, վիրաբույժ

Ա. Գրիգորյան – թերապևտ

Գ. Միրզոյան - նյարդաբան, հոգեբույժ

Գ. Ստեփանյան – քիթ, կոկորդ, ականջբան

Ն. Կարապետյան - սրտաբան

Ն. Սարգսյան – մաշկավեներաբան

Ա. Գալստյան - ակնաբույժ

Օ. Բաբայան – բուժքույր

Գ. Մարգարյան – հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Արարատի մարզպետի

2014թ հոկտեմբեր 30 թիվ 118 որոշման

ԿԱԶՄ

Մասիսի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Գ. Մանուկյան - Մասիսի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Զ. Թազայան - ՀՀ Ոստիկանության Մասիսի բաժնի պետի տեղակալ

Դ. Հակոբյան - Մասիսի քաղաքապետարանի առաջատար մասնագետ

Ա. Մամյան - ավագ բժիշկ, վիրաբույժ

Ն. Հարությունյան - թերապևտ

Գ.Վարդանյան - հոգեբույժ

Բ. Խաչատրյան - նյարդաբան

Ս.Նավասարդյան - քիթ,կոկորդ,ականջաբան

Լ. Սարգսյան - ակնաբույժ

Ս. Պողոսյան - մաշկավեներաբան

Հ.Այդինյան - սրտաբան

Ա. Հարությունյան - բուժքույր

Գ.Սարգսյան - հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ